

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
Հ Ր Ա Մ Ա Ն

«19» մարտ 2018 թ N 363-Ա

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՈՐԱԿԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ

ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության՝ 13-րդ կետի 15-րդ ենթակետը և 23-րդ կետի «10-րդ» ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝ «Խմելու ջրի որակի 2018 թվականի մոնիտորինգի ծրագիրը» համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության շրջակա միջավայրի հիգիենայի բաժնի պետ Ռուբեն Գրիգորյանին, «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնաճյուղերի տնօրեններին
 - 1) Ապահովել «Խմելու ջրի որակի 2018 թվականի մոնիտորինգի ծրագրի» իրականացումը:
 - 2) Փոփոխությունների բացակայության պարագայում՝ «Խմելու ջրի որակի 2018 թվականի մոնիտորինգի ծրագրի» դրույթները դարձնել շարունակական:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրենի տեղակալ Նունե Բակունցին:

Ա. ՎԱՆՅԱՆ

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՈՐԱԿԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԾՐԱԳԻՐ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Խմելու ջրի որակի 2018 թվականի մոնիտորինգի ծրագիրը (այսուհետ՝ մոնիտորինգի ծրագիր) նախատեսված է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնաճյուղերի (այսուհետ՝ Մասնաճյուղեր) կողմից Հայաստանի Հանրապետության բնակչությանը մատակարարվող խմելու ջրի որակի լաբորատոր հսկողության կազմակերպման, առողջության համար ռիսկերի բացահայտման, համաճարակային իրավիճակի գնահատման, մոնիտորինգի ամենօրյա և կիսամյակային վերլուծություն իրականացնելու համար:
2. Մոնիտորինգի ծրագրով սահմանվում են ջրամատակարարման կենտրոնացված համակարգերով (այսուհետ՝ համակարգ), գերատեսչական ջրամատակարարման համակարգերով և չկենտրոնացված ջրաղբյուրների ծորակներով տրվող խմելու ջրի նմուշառման կետերի ընտրությունը, խմելու ջրի որակի հետազոտությունների ծավալները, ցուցանիշները, վերլուծությունների վերաբերյալ պահանջները, խմելու ջրի որակի հետազոտության տարեկան և ամսական ծրագրի օրինակելի ձևերը, ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի և չկենտրոնացված աղբյուրների գույքագրման կարգը:
3. Մոնիտորինգի ծրագրով նախատեսվող խմելու ջրի որակի հետազոտությունների ծավալների և ցուցանիշների փոփոխությունները Մասնաճյուղերի կողմից հիմնավորվում և համաձայնեցվում են «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կենտրոնական ապարատի (այսուհետ՝ Կենտրոնական ապարատ) հետ:
4. Մոնիտորինգի ծրագրով նախատեսվող խմելու ջրի որակի հետազոտությունների ծավալները և ցուցանիշները չեն ընդգրկում ՀՀ առողջապահական տեսչական մարմնի (այսուհետ՝ ԱՏՄ) կողմից ներկայացված հայտերով (պայմանավորված համաճարակային ցուցումներով կամ իրավիճակներով, որոնք կարող են բերել խմելու ջրի որակի վատթարացմանը կամ տեսչական ստուգումներով, վարույթներով) հետազոտությունները, որոնք իրականացվում են արտապլանային:

5. Խմելու ջրի որակով պայմանավորված առողջության համար ռիսկերի բացահայտումը և համաճարակային իրավիճակի գնահատումը իրականացվում է ամենօրյա և կիսամյակային:
6. Խմելու ջրի որակով պայմանավորված առողջության համար ռիսկերի ամենօրյա վերլուծության և համաճարակային իրավիճակի գնահատման արդյունքում պարզաբանվում են ջրի որակի հետազոտությունների արդյունքում հայտնաբերված շեղումները և դրանց բնույթը, վերջիններիս հասցեները համադրվում են արձանագրված աղիքային վարակների կամ թունավորումների հասցեների, վթարային իրավիճակների և բողոքների վերաբերյալ ստացված հաղորդագրումների հետ:
7. Խմելու ջրի որակով պայմանավորված առողջության համար ռիսկերի բացահայտման և համաճարակային իրավիճակի գնահատման կիսամյակային վերլուծությունը ներկայացվում է Կենտրոնական ապարատին՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում: Վերլուծությունը տրվում է Հավելված 4-ում բերված ձևաչափով: Լրացուցիչ տեղեկատվությունը տրվում է ըստ Կենտրոնական ապարատի կողմից ներկայացված պահանջի:
8. Խմելու ջրի նմուշառումների ընթացքում իրականացվում է նմուշառման վայրի շրջապատի տեղազննում՝ չվերացված վթարների հայտնաբերման նպատակով, դրանց հայտնաբերման դեպքերում կատարվում է արտապլանային նմուշառում, անմիջապես իրազեկվում է Կենտրոնական ապարատը և ԱՏՄ-ն:
9. Լաբորատոր հետազոտությունների արդյունքում հայտնաբերված շեղումների դեպքում՝
- 1) եթե խմելու ջրի նմուշում հայտնաբերվում են ջերմատուլերանտ կոլիֆորմ մանրէներ և/կամ ընդհանուր կոլիֆորմ մանրէներ և/կամ կոլիֆագեր, կատարվում է նրանց որոշում՝ հրատապ վերցրած կրկնակի նմուշառված ջրում: Այդ դեպքերում, միաժամանակ կատարվում է ջրի աղտոտվածության պատճառի հայտնաբերման համար քլորիդների, ամոնիումային ազոտի, նիտրիտների և նիտրատների որոշում:
 - 2) Եթե խմելու ջրի կրկնակի հետազոտությունների ժամանակ 100 մլ-ում հայտնաբերվում են 2-ից ավելի ընդհանուր աղիքային խմբի մանրէներ և/կամ ջերմատուլերանտ կոլիֆորմ մանրէներ և/կամ կոլիֆագեր, ապա կատարվում է խմելու ջրի նմուշների հետազոտություն կոլիֆորմ ախտածին մանրէների և/կամ աղիքային վիրուսների հայտնաբերման վերաբերյալ:
 - 3) Խմելու ջրի որակի շեղումների վերաբերյալ Մասնաճյուղերը անմիջապես հայտնում են ԱՏՄ -ին:
 - 4) Կրկնակի հետազոտությունների արդյունքում շեղումներ հայտնաբերելու կամ ջրի ֆեկալ աղտոտվածության վերաբերյալ հիմքեր ունենալու դեպքում անմիջապես տեղեկացվում է Կենտրոնական ապարատը:

5) Զգայորոշական ցուցանիշներով շեղումներ հայտնաբերելու դեպքում շարունակվում է հետազոտությունը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի «խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-III-Ա2-1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին» N 876 հրամանի Հավելված 2-ում և 3-ում բերված՝ ջրի զգայորոշական հատկությունների վրա ազդող նյութերի պարունակության նկատմամբ:

II. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՎ ՏՐՎՈՂ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՈՐԱԿԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

10. Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերով տրվող խմելու ջրի նմուշառման կետերի ընտրությունը.

1) Ջրամատակարարման կենտրոնացված համակարգի գլխամասային կառույցի (ջրառի տեղերից) ծորակից, եթե նմուշառման հնարավորությունը բացակայում է՝ մինչև բնակավայրի ջրամատակարարման ցանց հասնելը առաջին ծորակից:

2) Մինչև բաշխիչ ցանց մտնելը՝ բնակավայրի մուտքի մոտ կամ օրվա կարգավորիչ ջրամբարի (այսուհետ՝ ՕԿՋ) ծորակից:

3) Ջրամատակարարման ցանցից՝ նմուշառումը կատարվում է փողոցների ջրաբաշխիչ սարքավորումներից, ցանցի առավել քայքայված հատվածներից (հաճախակի արձանագրված վթարների, ջրի որակի շեղումների հասցեներ), շենքերի ներքին ջրամատակարարման ցանցերի խողովակներից, որոնք ունեն ներմղում /պոմպ/ և տեղային ջրամղման սարքեր: Պարտադիր ընդգրկում են ազգաբնակչության կողմից զանգվածային ջրօգտագործման ծորակները՝ դպրոց, մանկապարտեզ, հիվանդանոց և այլն: Հետազոտվում են նաև փողոցների և բակերի ընդհանուր օգտագործման ծորակները:

11. Յուրաքանչյուր համակարգով տրվող խմելու ջրի նմուշների հետազոտության տեսակները և ծավալները պլանավորվում են համաձայն սույն ծրագրի Հավելված 1-ի: Երևան քաղաքի մասնաճյուղի կողմից հետազոտվում են մինչև բաշխիչ ցանց և բաշխիչ ցանցի խմելու ջրի որակը՝ ըստ սպասարկման տարածքների՝ համաձայն Հավելված 1-ի: Ջրամատակարարման բաշխիչ ցանցում առանց վարակազերծման խմելու ջրի մատակարարման դեպքում՝ մանրէաբանական, զգայորոշման ցուցանիշներով հետազոտությունների թիվը ավելացվում է՝ մինչև սահմանվածի կրկնապատիկը:

12. Մասնաճյուղերի խմելու ջրի որակի հետազոտությունների տարեկան և ամսական ծրագրերի ձևաչափերը բերված են Հավելված 2-ում:

III. ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ՈՐԱԿԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ՝ ՈՉ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԾՈՐԱԿՆԵՐԻՑ

13. Մոնիտորինգի համար ընտրվում են բաց ջրամբարների (լճեր, գետեր) ափամերձ տարածքներում տեղակայված հանգստի գոտիների և տուրիզմի այցելության հուշարձաններին հարակից տեղադրված, ինչպես նաև գյուղական համայնքների «գյուղամիջյան աղբյուրների» ծորակները:

14. Հանգստի գոտիների և տուրիզմի այցելության հուշարձաններին հարակից տեղադրված ծորակների ջրի որակի հետազոտությունները կատարվում են մանրէաբանական, զգայաբանական ցուցանիշներով՝ մայիսից մինչև հոկտեմբեր ամիսը՝ ամիսը 2 անգամ հաճախականությամբ,

15. Գյուղական համայնքների «գյուղամիջյան աղբյուրների» ծորակների ջրի որակի հետազոտությունները կատարվում են ջրամատակարարման համակարգի մինչև բաշխիչ ցանցի համար սահմանված (Հավելված 1) հաճախականությամբ և ցուցանիշներով:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶՐԻ ՈՐԱԿԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16. Կազմակերպությունների անհատական օգտագործման ջրամատակարարման համակարգերի ջրի որակի հետազոտությունները կատարվում են տվյալ տնտեսվարողի հետ կազմած համապատասխան պայմանագրի հիման վրա:

17. Զրի որակի անվտանգության գնահատման համար անհրաժեշտ է իրականացնել կազմակերպությունների (գերատեսչությունների) անհատական օգտագործման ջրմուղով տրվող ջրի որակի մանրէաբանական, զգայորոշման՝ առնվազն ամիսը 1 անգամ, ընդհանրացված ցուցանիշների, անօրգանական և օրգանական նյութերի՝ առնվազն տարին 1 անգամ հետազոտություններ, խմելու ջրի վարակազերծման առկայության դեպքում՝ նաև ամենօրյա մնացորդային ազատ քլորի (և/ կամ օզոնի) որոշումներ:

V. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ և ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ՌԵՖԵՐԵՆՍ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԿԵՆՏՐՈՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒԴԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

18. Տարվա ընթացքում (մեկ անգամ հաճախականությամբ) ընտրողաբար, մարզերից թվով 100 համայնքի (յուրաքանչյուր մարզից՝ 10 համայնք) կենտրոնացված ջրամատակարարման համակարգերից խմելու ջրի ճառագայթային անվտանգության և ընդլայնված քիմիական ցուցանիշներով հետազոտությունները իրականացվում են Հայաստանի Հանրապետության

առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի (այսուհետ՝ «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի) կողմից «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի կողմից: Տարվա ընթացքում (մեկ անգամ հաճախականությամբ) Երևան քաղաքի ջրամատակարարման գլխամասային կառույցներից խմելու ջրի ճառագայթային անվտանգության և ընդլայնված քիմիական ցուցանիշներով հետազոտությունները իրականացվում են «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի կողմից:

19. Ընդլայնված քիմիական հետազոտությունները իրականացվում են հետևյալ ցուցանիշներով՝ ստորգետնյա աղբյուրներից՝ համ, հոտ, գույն, պղտորություն, ջրածնային ցուցանիշ՝ PH, ընդհանուր հանքայնացում (չոր մնացորդ), ընդհանուր կոշտություն, պերմանգանատային օքսիդացում, նիտրատներ, նիտրիդներ, ամոնիում իոն, սուլֆատներ, քլորիդներ, երկաթ, ֆտորիդներ, մկնդեղ, կապար, սնդիկ, ալյումինիում, մանգան, կադմիում, բոր, բերիլիում, բարիում, մոլիբդեն, նիկել, սելեն, ստրոնցիում, պղինձ, քրոմ, ցինկ, ցիանիդներ, ֆտորիդներ, ԴԴՏ, մակերեսային ջրային ռեսուսների ջրառների դեպքում՝ նաև՝ նավթամթերքներ, մակերեսային ակտիվ նյութեր, ֆենոլային ինդեքս, պոլիֆոսֆատներ, քլորոֆորմ: Անհրաժեշտության դեպքում իրականացվում են հետազոտություններ ֆորմալդեհիդի, պոլիակրիլամիդի, ակտիվացված ալյումինում և երկաթ պարունակող կոագուլյանտների մնացորդային քանակների նկատմամբ:

20. Մարզերի համայնքների կենտրոնացված ջրամատակարարման համակարգերից խմելու ջրի հետազոտությունների իրականացման համար նմուշառումը և նմուշի տեղափոխումը «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղ ապահովում են Մասնաճյուղերը:

VI. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄԸ.

21. Տարվա առաջին եռամսյակում թարմացվում է յուրաքանչյուր ջրամատակարարման կենտրոնացված համակարգի համար նախորդ տարվա ընթացքում կազմված անձնագիրը՝ համաձայն Հավելված 3-ի:

22. Կազմվում է յուրաքանչյուր բնակավայրի կենտրոնացված համակարգերից տրվող խմելու ջրի նմուշառման ստացիոնար կետերի ցանկը՝ համաձայն Հավելված 3-ի:

23. Կազմվում է ցանկ՝ նմուշառման և հետազոտությունների համար ընտրված ոչ կենտրոնացված ջրամատակարարման ծորակների տեղակայման վերաբերյալ:

24. Կազմվում է ցանկ՝ համայնքների բնակիչների կողմից շահագործվող անհատական հորերի թվի վերաբերյալ:

Ջրառի տեղերում խմելու ջրում որոշվող ցուցանիշները, նմուշների քանակը և հետազոտությունների հաճախականությունը

Ցուցանիշների տեսակներ	Մեկ տարվա ընթացքում նմուշների քանակը, ոչ պակաս	
	Ստորգետնյա աղբյուրների համար	Մակերեսային աղբյուրների համար
Մանրէաբանական	1 (տարին 1 անգամ)	4 (եռամսյակը 1 անգամ)
Մակարոծաբանական		4 (եռամսյակը 1 անգամ)
Զգայորոշման	1 (տարին 1 անգամ)	4 (եռամսյակը 1 անգամ)
Սան.քիմիական	1 (տարին 1 անգամ)	4 (եռամսյակը 1 անգամ)

Մինչև բաշխիչ ցանց խմելու ջրում որոշվող ցուցանիշները, հետազոտությունների հաճախականությունը և հետազոտվող նմուշների քանակը

Ցուցանիշներ	Մեկ տարվա ընթացքում նմուշների քանակը, ոչ պակաս						
	Ստորգետնյա աղբյուրների համար					Մակերեսային աղբյուրներ համար	
	Տվյալ ջրահամակարգից ջրով ապահովող բնակչության թիվը						
	մինչև 1000	1000-10000	10 000-20000	20.000-100. 000	100000-ից բարձր	մինչև 100 000	100 000- ից բարձր
Մանրէաբանական	4/ եռամսյակը 1 անգամ	12/ ամիսը 1 անգամ	25/ ամիսը 2 անգամ	50/ շաբաթը 1 անգամ	100/ շաբաթը 2 անգամ	100/ շաբաթը 2 անգամ	150/ շաբաթը 3 անգամ
Մակարոծաբանակ ան	Չի կատարվում					12/ ամիսը 1 անգամ	24/ ամիսը 2 անգամ
Զգայորոշման	4/եռամսյակը 1 անգամ	12/ամիսը 1 անգամ	25/ ամիսը 2 անգամ	50/ շաբաթը 1 անգամ	100/ շաբաթը 2 անգամ	100/ շաբաթը 2 անգամ	150/ շաբաթը 3 անգամ
Սան.քիմիական ցուցանիշներ 1.	2/տարին 2 անգամ	4/տարին 4 անգամ	8/ եռամսյակը 2 անգամ	12/ ամիսը 1 անգամ	24/ ամիսը 2 անգամ	24/ ամիսը 2 անգամ	50/ շաբաթը 1 անգամ
Ջրապատրաստման տեխնոլոգիայի հետ կապված ցուցանիշներ 2.	4/եռամսյակը 1 անգամ	12/ամիսը 1 անգամ	25/ամիսը 2 անգամ	Ոչ պակաս քան շաբաթը 1 անգամ			

1. **Առնվազն՝** նիտրատներ, նիտրիդներ, կոշտություն, ջրածնային ցուցանիշ՝ PH, ընդհանուր հանքայնացում (չոր մնացորդ), պերմանգանատային օքսիդացում, երկաթ,

2. **Մայիսից մինչև նոյեմբեր՝** ջրապատրաստման տեխնոլոգիայի հետ կապված ցուցանիշների որոշումը կատարվում է շաբաթական առնվազն 2-3 անգամ,

Ջրամատակարարման բաշխիչ ցանցում խմելու ջրի մանրէաբանական, զգայորոշման ցուցանիշներով հետազոտվող նմուշների քանակը

Սպասարկվող բնակչության քանակը, հազ. մարդ	Նմուշների քանակը մեկ ամսում
մինչև 1000	2-3
1000-մինչև 10.000	4-9

10.000- մինչև 20.000	10-14
20.000-մինչև 50.000	15-30
50.000-մինչև 100.000	31-100
100.000-ից ավել	101-120

Հավելված 2

Մասնաճյուղի խմելու ջրի որակի հետազոտությունների տարեկան ծրագիր

Նմուշառման վայրը	Ցուցանիշներ	Տարեկան նմուշների թիվը՝ Ընդամենը.....	Տարեկան հետազոտությունների թիվը՝ Ընդամենը.....
Գլխամասային կառույցներ՝ Ընդամենը, թվով.....	Մանրէաբանական		
	Մակաբուծաբանական		
	Սան.քիմիական		
	Զգայորոշման		
Մինչև բաշխիչ ցանց՝ ՕԿՋ-ներ կամ առաջին կետեր. Ընդամենը, թվովկետ	Մանրէաբանական		
	Մակաբուծաբանական		
	Զգայորոշման		
	Սան.քիմիական		
	Ջրապատրաստման տեխնոլոգիայի հետ կապված ցուցանիշներով		
Ջրամատակարարման ցանց՝ բնակավայրերում նմուշառման կետեր. Ընդամենը, թվով.....կետ	Մանրէաբանական		
	Զգայորոշման		

Մասնաճյուղի խմելու ջրի որակի հետազոտությունների ամսական ծրագիր

	Նմուշառման կետերը	մանրէա նական	մակաբուծա-բանական	զգայ-որոշման	Մնացոր-դային քլոր	քիմիական ցուցանիշներ
1.	Գլխամասային կառույց /անվանումը/					
	Տեսակը՝ Մակերեսային կամ ստորգետնյա					
	ՕԿՋ /անվանումը/					
	Ցանց՝ բնակավայրի անվանումը և կետերի թիվը					
2.	Գլխամասային կառույց /անվանումը/					
	Տեսակը՝ Մակերեսային կամ ստորգետնյա					
	ՕԿՋ /անվանումը/					
	Ցանց՝ բնակավայրի անվանումը և կետերի թիվը					
3.						

Մասնաճյուղի խմելու ջրի որակի հետազոտությունների ամսական ծրագիր՝ ըստ օրերի

Նմուշառման լայրը/հասցեն՝ գլխամասային կառույց, ՕԿՁ, բաշխիչ ցանցի հասցե և այլն	20..թ. ամսվա օրեր																													
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	
	Գլխամասային կառույց																													
	Մուտքի կետ, ՕԿՁ																													
	Ցանց																													

Ամսաթվերի տակ՝ պլանավորված հետազոտության տեսակը նշվում է պայմանական նշաններով՝ «1» թիվը՝ մանրէաբանական, մակաբուծաբանական և զգայորոշման հետազոտությունների համար «2» թիվը՝ սանիտարաքիմիական հետազոտությունների համար, «3» թիվը՝ մնացորդային ազատ քլոր հետազոտության համար

Հավելված 3

Նմուշառման ստացիոնար կետերի ցանկ

N	Բնակավայրի անվանումը	Բաշխիչ ցանցում նմուշառման ստացիոնար կետերը	ՕԿՁ-ներից նմուշառման կետերը	Գլխամասային կառույցներից նմուշառման կետերը

Ջրամատակարարման համակարգի (նշել անվանումը, տեսակը՝ մակերեսային կամ ստորգետնյա, շահագործող տնտեսվարողը) գույքագրում

տարբերակ	ՕԿՁ-ների անվանումը	Ջրամատակարար վող բնակավայրը /բնակավայրերը	Ջրամատակարար ման համակարգից սպասարկվող բնակչության թիվը	Բաշխիչ ցանցի վիճակը՝ հաճախ ակի վթարնե ր	Գլխամասային կառույցի տեսակը (կապտած, խորքային, ճնշումային հոր և այլն) սան.պահպանման խիստ ռեժիմի գոտու ցանկապատի առկայություն	ՕԿՁ-ում սան.պահպան ման խիստ ռեժիմի գոտու ցանկապատի առկայություն	Վարակ ազեծ ման առկայու թյուն և մեթոդ

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՈՐԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՌԻՍԿԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ և ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԶԱՓ

1. Ջրամատակարարման համակարգերը սպասարկող տնտեսվարողները, մասնավորապես՝
 - 1) ջրամատակարարման համակարգերի թիվը և անվանումները, որոնք սպասարկվում են մասնագիտացված ՓԲԸ-ների կողմից,
 - 2) ջրամատակարարման համակարգերի թիվը և անվանումները, որոնք սպասարկվում են համայնքապետարանների կամ անհատ բնակիչների կողմից:
 - 3) ջրամատակարարման համակարգերի թիվը և անվանումները, որոնք սպասարկվում են ԱԶ-ների կողմից,
 - 4) ջրամատակարարման համակարգերի թիվը և անվանումները, որոնք սպասարկվում են ԶՕՄ-երի,
 - 5) Կազմակերպությունների (գերատեսչությունների) անհատական օգտագործման ջրամատակարարման համակարգերի թիվը և անվանումները:
2. Կիսամյակի ընթացքում իրականացված մանրէաբանական, ցուցանիշներով հետազոտված նմուշների ընդհանուր թիվը, շեղումները (.....%), համեմատությունը նախորդ կիսամյակի հետ (.....%): Այդ թվում՝ ՓԲԸ-ների կողմից հետազոտված նմուշների ընդհանուր թիվը, շեղումները (.....%), համայնքապետարանների կամ անհատ բնակիչների կողմից սպասարկվող ջրմուղներից հետազոտված նմուշների թիվը, Ա/Զ-ների կողմից հետազոտված նմուշների ընդհանուր թիվը, շեղումները (.....%), ԶՕՄ-երի կողմից հետազոտված նմուշների ընդհանուր թիվը, շեղումները (.....%), կազմակերպությունների (գերատեսչությունների) անհատական օգտագործման ջրմուղներից հետազոտված նմուշների ընդհանուր թիվը, շեղումները (.....%):
3. Կիսամյակի ընթացքում իրականացված մանրէաբանական ցուցանիշներով հետազոտված նմուշների ընդհանուր թիվը, շեղումները (.....%) ըստ մարզի տարածաշրջանների:
4. Բնակավայրերը, որոնցում ավելի հաճախ արձանագրվել են մանրէաբանական ցուցանիշներով շեղումներ՝ նմուշների թիվ/շեղում (.....%):
5. Կիսամյակի ընթացքում իրականացված մակաբուծաբանական ցուցանիշներով հետազոտված նմուշների ընդհանուր թիվը, շեղումները (.....%): Կոնկրետ որ՝ բնակավայրում, ում՝ կողմից սպասարկվող ջրմուղում են արձանագրվել շեղումները:
6. Կիսամյակի ընթացքում իրականացված սանիտարաքիմիական ցուցանիշներով հետազոտված ջրի նմուշների թիվը, շեղումները: Կոնկրետ որ՝ բնակավայրում, ում՝ կողմից սպասարկվող ջրմուղում և որ՝ ցուցանիշներով են արձանագրվել շեղումները:

7. Մասնաճյուղի կողմից սպասարկման տարածքում առկա ջրամատակարարման համակարգերից քանիսի ջուրն է վարակազերծվում, ինչ եղանակով: Որ՞ ջրամատակարարման համակարգերում կարելի է վարակազերծման աշխատանքները գնահատել անբավարար, ելնելով մոնիտորինգի/արդյունքներից:
8. Իրականացված մնացորդային ազատ քլոր ցուցանիշով հետազոտությունների թիվը, շեղումները (.....%): Կոնկրետ որ՞ բնակավայրերում են արձանագրվել շեղումները:
9. Կիսամյակի ընթացքում իրականացված ճառագայթաբանական ցուցանիշներով հետազոտված նմուշների թիվը, շեղումները: Կոնկրետ որ՞ ջրմուղներում են արձանագրվել շեղումները:
10. Մարզի բնակավայրերը, որոնց ջրամատակարարումը իրականացվում է ընդհատումներով (մանրամասնել) կամ բացակայում է կենտրոնացված ջրամատակարարումը, այդ թվում՝ իրականացվում է ցիստերներով բերովի ջրով:
11. Բնակավայրեր, որոնցում առավել հաճախ արձանագրվել են վթարներ:
12. Հանգստի գոտիներում կամ բնակավայրերում տեղակայված չկենտրոնացված ջրաղբյուրների վերաբերյալ տեղեկատվություն, իրականացված լաբորատոր հետազոտությունները և արդյունքները:
13. Մասնաճյուղի սպասարկման տարածքում աղիքային վարակիչ հիվանդությունների դեպքերից քանիսի հասցեներն են համընկնում խմելու ջրի հետազոտությունների արդյունքում հայտնաբերված շեղումների և արձանագրված վթարների հասցեների հետ:
14. Աղիքային վարակիչ հիվանդություններով հիվանդացության ինտենսիվ ցուցանիշը և համեմատությունը միջին հանրապետական ցուցանիշի հետ մարզի այն բնակավայրերում, որոնցում ավելի հաճախ արձանագրվել են ջրի մանրէաբանական ցուցանիշներով շեղումներ:
15. Մասնաճյուղի սպասարկման տարածքում արձանագրված ջրային գործոնով պայմանավորված բռնկումների վերլուծությունը: